ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Այսօրվա իմ խոսքին անցնելուց առաջ ես սրտի պարտք եմ զգում ողջունել ձեր բոլորին ներկայությունը, հետաքրքրությունը և կապվածությունը այն առաքելության, որին կոչվել ենք բոլորս, յուրաքանչյուրը իր բնագավառում, պատասխանատվությունների իր շրջագծում, բայց բոլորս էլ գտնվում ենք ճանապարհորդ այն ճանապարհի վրա, որ սկսվեց Քրիստոսով, շարունակվեց մեր հայրերով և այսօր ևս շարունակվում է մեր բոլորի մասնակցությամբ, հանձնառությամբ:

Այս սրահը այսօր ինձ համար ուրիշ իմաստ զգեցավ: Ամեն անգամ, երբ ես այստեղ հյուրեր եմ ընդունում, առհասարակ այս պատկերներին, այս կառուցվածքին եմ խոսք տալիս, պատմում եմ մեր գրերի գյուտի մասին, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի այս շքեղ պատկերումով: Խոսում եմ հավատքի պաշտպանության այն գոյապայքարի մասին, որ խորհրդանշվում է Վարդանանց այդ հրաշագեղ պատկերացումով: Խոսում եմ Վեհարանի, Մայր տաճարի, Էջմիածնի մասին, նրանք են խոսում իմ տկար անձի և տկար խոսքի միջից:

Այսօր, այս նույն սրահում, այս նույն կամարները ուրիշ գույն են ստացել, ուրիշ իմաստ են առել, մեր այսօրվան ապրող ժողովրդի մեջ քրիստոնեական հավատքի, մեր հայրերի սուրբ ավանդության վերակենդանացման շունչն է, և դա եմ ողջունում ես ձեր բոլորի մեջ:

Այսօր իմ ուրախությունն եմ հայտնում և նաև գնահատանքը՝ Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչական Կենտրոնի բոլոր պատասխանատու անձերին՝ Վարիչ-տնօրենից մինչև պարզ աշխատողները, որ այլևս ավանդական դարձրին առաքյալների՝ մեր Եկեղեցու հիմնադիր առաքյալների տոնին առիթով Քրիստոնեական Դաստիարակության օրը, այս պահը արժեցնել ուսուցիչների, ուսուցչուհիների կյանքում և այնպես արժեցնել, որ վաղը չլինի այն, ինչ որ էր երեկ:

Իմ գնահատանքը մեր բոլոր առաջնորդ սրբազաններին, բոլոր ուսուցիչներին և նաև պ. Սուքյանին, որ այսօր իր ներկայությամբը ուզեց ասել բոլորիս, որ պետությունը մեծ ակնկալությամբ սպասում է Եկեղեցուց այն, ինչ որ Եկեղեցու կոչումին իսկատիպ հասկացողությունն է՝ ժողովուրդի հոգևոր բարոյական առողջության, կենսունակության և ստեղծագործականության թափ տալու առաքելությունը:

Հիշում եք դուք, որ անցյալ տարի ես խոսեցի առաքելության գաղափարի մասին, Սուրբ Գրքի տվյալներով, Եկեղեցու պատմության դրվագների միջից հստակեցնելով՝ Քրիստոսի հղացքը առաքելության մասին: Այսօր ես ցանկանում եմ մի ուրիշ երես բացել մեր ուսուցիչների գործունեության դաշտում:

Շնորհակալ եմ երկու Հայր Սուրբերից, որ խոսեցին Քրիստոնեական Դաստիարակության ընդհանուր երևույթի, խոսեցին նաև արդի աշխար-

հում քրիստոնեական բարոյականության և նոր-նոր կացությունների այն մարտահրավերի մասին: Ես այսօր ուզում եմ մի ուրիշ հարցի վրա հրավիրել ձեր ուշադրությունը:

Ի՞նչ ենք ուսուցանում մեր երեխաներին: Սուրբ Գիրքը ամենից տիրապետող տեղն է գրավել մեր ուսուցման մեջ: Այսպես նկատում եմ, որ Քրիստոնեական դաստիարակություն ասելով շատերն այն գաղափարն են փայփայում, որ Սուրբ Գիրքը եթե տանք, քրիստոնեական դաստիարակություն տված կլինենք: Դա ճշմարիտ է, բայց ոչ ամբողջական ճշմարտություն: Քրիստոնեական կյանքը գիրք չէ, և գրքապաշտությունը Աստվածպաշտության հետ նույնը չէ: Սուրբ Գրոց ծանոթությունը չի նշանակե Աստծու հետ հաղորդություն: Եվ այս բողոքական չափազանցյալ ըմբռնումներից պետք է հրաժարվիլ: Առանց անդրադառնալու, մենք զոհ ենք գնում երբեմն այդ տարապայմանորեն չափազանցված գրքապաշտության՝ Սուրբ Գրքի ո՛ր գրքից, ո՛ր համարից, ո՛ր տողն ենք մեջ բերում, դրա մեջն ենք տեսնում քրիստոնեական կյանքը: Բայց նույն Սուրբ Գիրքն է ասում. «Գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»: Գիրն ինքը ծնունդն է հոգիին, և ոչ թե հոգեկան ապրումը ծնունդն է գիրին:

Եվ հետևաբար, այսօր ես ուզում ձեր բոլորի մտահայացքը սևեռել այն բանի մասին, որ մենք ուսուցանելու ենք երիտասարդներին, երեխաներին, նաև չափահասներին. դա եկեղեցու հասարակաց աղոթքն է, ծեսն է, և որի վրա այժմ նայում ենք շատ թերևակի եղանակով: Եվ հենց քիչ առաջ ասվեց այստեղ, որ եկեղեցին միայն ծես չէ: Կարծեք թե ծեսը երկրորդական է, ո՛չ, եկեղեցին ծեսն է՝ հաղորդությունը ընդ Աստուծո, հավաքաբար:

Հիսուս ի՞նչ արեց, միայն խո՞սք քարոզեց: Աղոթեց, առաքյալներին իր շուրջը հավաքեց, միասին սաղմոս երգեցին, Հին Կտակարանից վերցված օրհներգություններ երգեցին, միասին Սինագոգ գնացին, գիրք կարդացին:

Պաշտամունքը սիրտն է քրիստոնեության: Քրիստոնեությունը Աստծու և մարդու հանդիպումն է, և այդ հանդիպումին մեջ աղոթքն այն թեղն է, ինչպես Ն. Լամբրոնացին ասել է 12-րդ դարում. «Աղոթքը շարժումն է այն պարանի, որի զանգակը երկնքում է», մի պատկերավոր, ուժեղ բացատրություն:

Եվ հետևաբար, մեր երեխաներին այդ հաղորդությամբ Աստծու հետ և իրենց կյանքը Աստծու նայվածքին ներքև ապրելու գիտակցությունը, փորձառությունը, վարժությունն ենք տալու, ոչ թե գիտությունը: Եթե ուզենամ հիմա Սուրբ Գրքի ծանոթությունն ունենալ, կարող եմ համաբարբառը բացել, բառերին նայել և ամբողջ ծանոթությունը ունենալ, և ձեզանից շատերը կարող են կոմպյուտերի վրա բառը գտնել և այդ բառը ամբողջությամբ հասկանալ, թե քանի անգամ գործածվել է: Այս բոլորը ծանոթություն է, բայց ի՞նչ ենք ուսուցանելու երեխաներին. աղոթել և զգացնել երեխային, որ ինքը բացարձակ տերը չէ այս կյանքին: Եթե բացարձակ տերը լինի, և մյուս անհատն էլ տեր լինի, և

մյուս անհատն էլ տեր լինի՝ գազաններ կլինեն: Եթե յուրաքանչյուրը ինք իրեն նկատի կյանքի տեր, և այս գաղափարը եթե երբեք մեր ժողովրդի գիտակցությանը մեջ չմտնի, մեր ուսուցումները ծանոթությունների, գիտելիքների սահմանի մեջ կմնա:

Աբրահամի որդին էր Իսահակը, սա կարող ես գիտենալ, բայց թե Աբրահամը Աստծու հավատարմության համար մինչև անգամ իր սեփական որդին զոհելու գիտակցությունն ուներ, Աստծու ներկայությունն իր մեջ բացարձակատիրություն էր, այս է, որ պիտի փոխանցվի, ոչ թե ծանոթությունը: Ծանոթությունը կեղևն է, հաղորդությունը՝ հոգին, ծառի ավիշը:

Հետևաբար, ծեսը եկեղեցու արարողություն չէ այնպես ձևապաշտական, ինչպես այժմ մենք երևակայում ենք և երբեմն ալ հանցավոր ենք մենք՝ հոգևորականներս, որ չենք կարողանում այդ ծեսը կենդանի իբրև ապրում ժողովրդի կյանքում արտահայտել, բայց դա ուրիշ հարց է: Բայց ծեսի արժեքը չի նվազի նրա գործածման մեջ մեր կամ ուրիշների թերացումով. ինչպես օրինակի համար լույսը իր լույսից բան չի կորցնի, եթե երբեք մեր աչքերի մեջ սև ակնոց դնենք կամ կեղտը մեր բիբերին վրա հավաքված լինի:

Հետևաբար, այսօր ես կուզեի ասել հետևյալ մի քանի ճշմարտությունները, որոնք մեր ուսուցիչների և ուսուցչուհիների ամենօրյա գործի մեջ ունեն իրենց շատ կենսական, խիստ էական կետը: Ծեսը բոլոր կրոնքների մեջ կա: Կրոնք չկա առանց ծեսի: Կա փիլիսոփայություն, մտքի հղացք, մտատենություն, ճշմարտության մասին խորհրդածություն, բայց կրոնքը կյանք է, և կյանքի մեջ հաղորդությունն է և այդ հաղորդությունը հավաքական է և ոչ թե անհատական: Միացնում ենք ձեռքերը, երբ ասում ենք հավատամք, ոչ թե հավատամ: Եկեղեցու պատարագի ընթացքին ասվում է. Եկեղեցիս մի անձն եղև. ես, դու, մյուսը ո՛ր գյուղից ենք, ի՛նչ անուն ունենք, ի՛նչ ուսում ունենք, ի՛նչ ընկերային դիրք ունենք, այդ բոլորը չքանում են, երբ միանում ենք ի մի Աստված, ի մի Քրիստոս, ի մի Հոգի: Դա է մեր բուն կրոնքը: Ծեսը, ինչպես ասեցի, Հիսուսի կյանքի մեջ ներկա էր, և ուժեղ կերպով: Ծեսը ներկա էր առաքյալների կյանքում. բացեք Գործք Առաքելոցը: Նրանք հաճախ հավաքվում էին ի Վերնատունն, ի բեկումն հացի, պատարագի համար հացը կբաշխեին, կուտեին, կճաշակեին ի Քրիստոս, և հետո կուտեին իրենց սովորական ընթրիքը կամ ճաշը: Ծեսը ներկա եղավ մեր ընդհանուր աշխարհի եկեղեցիների կյանքում: Քանի պատարագներ կան գրված՝ Հակոբոս Տեառնեղբոր առաքյալի պատարագը, Աթանասի պատարագը, Բարսեղի պատարագը, Ոսկեբերանի պատարագը, Նազիանզացու պատարագը: Եկեղեցական հայրերը ծիսական գրականություն մշակեցին, ոչ թե պատմական, գրական, փիլիսոփայական, մեկնողական, այլ ծիսական, ժողովուրդի հավաքական ապրումին տուն տվող, սնունդ հայթայթող գրականություն:

Ծեսը ոչ թե քո՝ անհատին, կատարած աղոթքն է տանը, քո ննջասենյակում կամ ճաշի սեղանի առաջ կամ պարտեզում, կամ փողոցում,

խանութում, դա քո պարտքն է անհատական: Բայց ծեսը դա չի: Ծեսը հավաքական աղոթքն է, և այդ հավաքական աղոթքին մեջ ծեսը ես սահմանել եմ հետևյալ բառերով. «Եկեղեցական ծեսը շարքն է, դասավորումն է այն խոսքերին, այն երգերին և այն շարժումներին, որոնք արտասանվում են, եղանակվում են և կատարվում են եկեղեցու անդամների կամ հավատացյալների կողմից՝ Աստծուն պաշտելու համար միասնաբար կամ համայնաբար»:

Ըստ Եկեղեցու հայրերի սահմանած կարգի և դասավորության, դա կոչվում է կարգ, շարք, դասավորում այն բոլոր խոսքերին, երգերին, շարժումներին, որոնք սահմանվել են Եկեղեցու իշխանության կողմից և դարձել են մեր Ժամագրքի, Պատարագամատույցի, Մաշտոցի այն բովանդակությունը, որ պիտի ժողովրդի մեջ կիրարկվելով, գործադրվելով՝ կյանքի վերածվի ժողովրդի կյանքի մեջ:

Ի՞նչ են անելու մեր շատ սիրելի ուսուցչուհիները և ուսուցիչները վարժարաններում: Մեր ծիսական գրականության հսկա ժառանգության համար ես այնպես եմ մտածում, որ նախ առաջնահերթ կարևորություն է ընծայվելու մեր ուսուցիչների և ուսուցչուհիների կողմից՝ երեխաներին միասնական աղոթք սովորեցնելու պարտականության մեջ: Եվ ես անձնապես հիշում եմ, որ ես Սուրբ Գիրք կարդալով քրիստոնյա չեմ եղել, և ինձ նման շատ-շատերը: Երբ երեխան, որ դեռ կարդալ չգիտի, որտեղից պիտի Հայր մերն ասի. Մատթեոսի Ավետարանի այսինչ գլխի՞ց կարդալով, թե իր ուսուցչից, իր ծնողից, իր մեծ մորից կամ ուրիշից, դա իրրև աղոթք սովորելու:

«Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա»: Սա դպրոցում եմ սովորել, նախքան եկեղեցում երգելը: Հետևաբար մեր, քրիստոնեական դաստիարակության գործունեության մեջ, հատկապես դպրոցական մարզում, երեխաներին գիրք, ծանոթություն, գիտելիք տալուց առաջ և ավելի պետք է վարժեցնել միասնաբար աղոթելուն: Ես ասեմ ձեզ այնքան, որքան իմանում եմ մանկան հոգեբանության մասին գրքեր կարդալուցս հետո, որ մանուկները ավելի շարժումի տարիքում կլինեն՝ մի գործ անելու, մի բան իրենցից անելու և ոչ թե կրավորական կերպով նստելու և լսելու: Երբ շարժվեն, ավելի հետաքրքիր կդառնա իրենց համար դասը: Եվ այդ պատճառով, երբ օրինակի համար երեխային ասենք մի անգամ. եկե՛ք հիմա աղոթք անենք. ձեռքերը իրար կմիացնեն: Բացատրեք իրենց: Աղոթքը բացատրությամբ սովորեցնելն է աղոթքի սովորեցման ամենեն առողջ եղանակը. դուք ո՞նց եք ապրում, երեխեք, որտե՞ղից եք հաց ճարում, ո՞վ է ձեզ հագուստ տալիս, ո՞վ է ձեզ խնամք տալիս, ո՞վ է ձեզ մաքրում. ծնողքը, ձեր մայրը, ձեր հայրը: Եկե՛ք առաջին աղոթքը անենք այսպես. Ով Տեր, պահիր առողջ իմ ծնողին. կրկնել, կրկնել, եթե եղանակ կա, եղանակ սովորեցնել: Մի խոսքով Աստծու հետ հաղորդակցության միջոցը դարձնել երեխային փորձառական կյանքին մեջ մի գործունեության եղանակ: Եվ առհասարակ մեր Եկեղեցին այնքան հարուստ գրականություն ունի ծիսական տեսակետից և, դժբախտաբար, մենք դրան այնքան մոտից ծանոթ չենք:

Այսպիսի մի համագումարի էր, ճիշտ 32 տարիներ առաջ, 1954թ.-ին,

երբ ուսուցիչներ հավաքվել էին, ես ալ շատ երիտասարդ երկու տարեկան վարդապետ էի մեր սիրելի հայր սուրբերի նման, դասախոսության հրավիրվեցի, Եկեղեցու ծառայությունների մասին էր, «Հայաստանյայց Եկեղեցին իր ծառայական կերպին մեջ», ես այստեղ պիտի մեջբերեմ հետևյալը, ոչ թե իմ խոսքերից, այլ Թորգոմ Պատրիարք Գուշակյանի. «Առավոտյան, Արևագալի, երեկոյան և մյուս ժամերգություններուն բնագրերում կան գեղահյուս աղոթքներ, աղոթանման սարկավագական քարոզներ, որոնք առավոտյան ցողի պես կամ երեկոյան մարող լույսերի ցոլքի պես իջնում են հավատացյալի հոգու խորքում և այնպիսի ապրումներ են զարթեցնում, հրճվանքի, անդորրության, բերկրանքի, սրբության վիճակներ են ստեղծում»:

Եկեղեցու ծեսը չպետք է մնա գրքերի մեջ՝ երբեմն-երբեմն բացվելու համար, այլ պիտի դառնա հոգևոր ապրումների հետ շաղախված մի այնպիսի փորձառություն, որ մեզի երջանկություն պատճառի, հոգեկան հանդարտություն, անդորրություն՝ խռովյալ օրերին: Վերջերս կարդացի Հույն Եկեղեցու ծիսական գրականությունից որոշ էջեր և կարող եմ ասել, որ մեր շարականները ոչնչով ետ չեն մնում, ընդհակառակը, որոշ մարզերում շատ ավելի խոր հոգևորություն, հոգեկան հարստություն ունեն իրենց մեջ: Հետևաբար, ես չեմ ուզում այլևս շատ խոսել այս հարցի մասին, բայց մի բան եմ ցանկանում, որ մեր առաջիկա ծրագրումների ընթացքին մեր ուսուցիչների և ուսուցչուհիների գործունեությանը մեջ մեր Եկեղեցու ծեսը ներգրավվի, ներառնվի, լայն տարածք ստանա, և երեխաներին իսկապես ամբողջական հոգևոր կրթության համար դա լինի մեծ ներդրում, մի խոսքով մղում, շահագրգռություն: Եկեք այսօր մենք խուսափենք ինքնատեսությունից, ինքնագովությունից և հոետորական, ընդհանրացյալ, մանավանդ հանդիսավոր արտահայտություններից: Եկեք լինենք ներհայաց կերպով ինքնատես:

Այսօր մեր ազգի մեջ քանի՞ ընտանիք գիտի մկրտության խորհուրդը: Ես լավ եմ իմանում, երբ հարսանիք է լինում, երբ մկրտություն է լինում, երբ, Աստված թող հեռու անի բոլորիդ տանից, թաղում է լինում, մահ է լինում, առաջին մտածումը, որ մեր ժողովրդի զավակները ունենում են, որտեղ պիտի սեղան սարքենք, ինչ կերակուր պիտի պատրաստենք, ինչ քեֆ պիտի անենք, որին պիտի հրավիրենք, ինչ խմիչքներ պիտի դնենք: Մենք, ինչպես Հայր Սուրբն իր դասախոսության մեջ ասեց, աշխարհում ենք ապրում և աշխարհից դուրս չենք կարող ապրել, մենք մաս ենք կազմում աշխարհին, բայց ինչպես ենք ապրում աշխարհում: Եթե երբեք աշխարհ բառը Ավետարանում ճշմարտության լույսի ներքո դիտենք, աշխարհը գեղեցիկ է՝ աշխարհը, Աստծուց ստեղծված աշխարհը: Բայց մենք ենք, որ ինչպես մի գեղեցիկ կերակուրի մեջ կարող ենք կեղտոտություն խառնել և փչացնել, ինչպես կարող ենք մի գեղեցիկ դեմքի վրա տգեղություն ստեղծել, ինչպես մի գեղեցիկ մարմնին վրա տգեղ հագուստ հագցնել, ինչպես կարող ենք մի գեղեցիկ ծառը փչացնել, այնպես նաև աշխարհում աշխարհային է դառնում, և դրանով է, որ աշխարհը դադարում է Աստծու աշխարհը լինել: Իսկ ինչու՞ ենք

մենք, որպեսզի զգացնենք աշխարհին, որ նա պետք է լինի աշխարհ, բայց Աստուծո՛ աշխարհը, և ոչ թե Աստուծո աշխարհից իր շինած չնաշխարհը:

Ի՞նչ կնշանակե քրիստոնեական դաստիարակություն: Պետք է առաքելության նախանձախնդրություն, հավատամք: Տիեզերական Պատրիարքը՝ Աթենագորաս, որ մեծ դեմք է արդի ժամանակների պատմության մեջ, Լիբանան էր եկել: Պատարագի գնացինք, ես պարզ եպիսկոպոս էի. երբ որ այդ հանդիսավոր, շքեղ պատարագին Հավատամքի բաժինը եկավ, մի աշխարական մարդ՝ Չարլզ Մընի, փիլիսոփայության դասախոս, Լիբանանի Արտաքին գործերի նախարար, Միացյալ Ազգերի մի տարվա ընդհանուր ժողովի նախագահ: Չարլզ Մընի, որ բազմաթիվ գրքեր է գրել, շապիկը հագած խորան բարձրացավ և հունարեն Հավատամք ասաց: Եկեղեցու ապրումն ուներ իր մեջ՝ իր եկեղեցու արարողություններին հետ հաղորդությամբ, և ոչ թե ծանոթությամբ: Մենք աշխարհիկացրինք մեր եկեղեցին, տարապայման աստիճանի ազգայնականության վերածեցինք: Ազգայինը մեր հպարտությունն է, բայց ի հեճուկս հոգևորին, ազգայնամոլությունը մտցնել եկեղեցու մեջ, եկեղեցու դերակատարությունը նվազեցնել կնշանակե՝ եկեղեցու, ազգի կազմավորման պրոցեսին մեջ: Ահա թե ինչու այսօր կոչ եմ անում ձեզ, որ դուք ձեր ուսուցումների ընթացքում նկատի ունենաք Սուրբ Գրքի կողքին, և իմ անձնական հայեցողությամբը Սուրբ Գիրքն իսկ կենսավորելու մտահոգությամբ ծեսը, աղոթքը: Հասարակաց աղոթքը պետք է դարձնենք մեր ժողովրդի համար, մեր երեխաների համար կենդանի դասագիրք, առանց անպայման գրքի:

Հավարտ Նորին Սրբության պատգամ-դասախոսության, հնչեց «*Եկեղեցին հայկական*» երգը:

Բանախոսությունների ավարտին, ուսուցիչների կողմից եղան կրոնի ուսուցման, ուսուցիչների պատրաստման, կրոնական քարոզչության, կրոնական դասագրքերի և հոգևոր գրականության պատրաստման վերաբերող հարցադրումներ, որոնց տրվեցին գոհացուցիչ պատասխաններ, եղան նաև առաջարկություններ:

Օրվա խորհուրդը հարստացրին «*Ս. Գրիգոր Լուսավորիչ*» կիրակնօրյա վարժարանի սաները: Նրանց հանդեսը նվիրված էր Հայ Եկեղեցու մեծ երախտավորներին՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալներին:

Հանդիսությունն ավարտվեց «*Պահպանիչով*» և Հայրապետական օրհներգով: Այնուհետև հյուրասրահներում տրվեց սիրո ճաշ:

Հայոց աշխարհի տարբեր անկյուններից եկած ուսուցիչները Գանձատուն այցելելուց հետո հրաժեշտ տվեցին Վեհափառ Հայրապետին և հոգևոր Հայրերին:

Նրանք եկել էին՝ երկյուղածությամբ տոնելու Սուրբ առաքյալների խնկելի հիշատակը, իսկ Քրիստոնեական Դաստիարակության օրը դարձնելու ուխտի նորոգման օր:

Մեր ուխտով ու հավատքով կենդանի պահենք մեր մեջ Քրիստոսի մարմինն ու արյունը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՆՈՅԱՆ